Հ ա յ ա ս տ ա ն ի Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

«___» _____ 2022թ. N_____

Ձեր 13.05.2022թ. Հ/Հ ՍՄ//13061-2022

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

«Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը առաջարկվող մեխանիզմներով ՀՀ-ում կիրառման մեջ է դրվում առաջին անգամ: Մեխանիզմի արդյունավետության կամ անկատարության, դրա կիրառման արդյունքում առաջացած խնդիրների, դրանց ծավալների վերաբերալ չկան տվյալներ, ուստի, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է այս փուլում զերծ մնալ նախագծի կարգավորման ազդեցության գնահատում իրականացնելուց:

Համաձայն ենք Վարչապետի աշխատակազմի կարգավորման ազդեցության գնահատման վարչության այն տեսակետին, որ Նախագիծը պարունակում է կարգավորման մեխանիզմների բազմաթիվ անհստակություններ՝ պայմանավորված նախագծում օգտագործվող անորոշություններ պարունակող «բավարար», «էական», «հնարավոր» և նմանատիպ այլ եզրույթներով (Նախագծի հավելվածի՝ 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետեր, 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետ, 25-րդ կետի 1-ին ենթակետ և այլն):

Միաժամանակ պետք է նկատել, որ Վարչապետի աշխատակազմի կարգավորման ազդեցության գնահատման վարչության առաջարկվող տարբերակը՝ մոտավոր գնահատումների արդյունքում իրականացնել ԿԱԳ, չի կարող տալ լիարժեք պատկերացում հնարավոր ծախսերի և օգուտների վերաբերյալ, քանի որ խելամիտ հարմարեցման միջոցները կարող են լինել շատ տարբեր, իսկ նրանց միջին շուկայական գները կարող են տատանվել մեծ միջակայքում: Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքը, մեր կարծիքով նպատակահարմար չէ այս փուլում իրականացնել ԿԱԳ:

Միաժամանակ պետք է նկատել, որ խնդիր իրոք կարիք ունի կարգավորման և այն բխում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջից: Այս իմաստով կարևոր է մշակել կարգավորման գործուն և արդյունավետ մեխանիզմներ, որոնք կպարունակեն հստակ չափորոշիչներ և կարգավորման մեխանիզմներ, հնարավորություն տալով թե մասնավոր և թե պետական հատվածի գործատուներին հստակ պլանավորել իրենց ծախսերը, իսկ վերահսկող կամ շահառուների իրավունքները պաշտպանող կառույցներին իրականացնել արդյունավետ վերահսկողություն և շահառուների իրավունքների պաշտպանություն:

Մեր կարծիքով, նման արդյունքի հնարավոր է հասնել ներկայացված նախագծի որոշակի լրամշակումից և ընդունումից հետո, այն շարունակական, առնվազն մեկ տարի, ժամկետով մշտադիտարկման ենթարկելու արդյունքում:

Նախագծի գործողության մեջ գտնվելու ընթացքում մշտադիտարկման իրականացման միջոցով կհավաքագրվեն ի հայտ եկած խնդիրները, կկատարվեն համապատասխան վերլուծություններ և գնահատումներ, կուսումնասիրվեն շահառուների կարծիքը և միջազգային փորձը, որից հետո միայն կձեռնարկվեն կոնկրետ քայլեր՝ իրավական կարգավորումների շրջանակում չափորոշիչների սահմանման կամ խնդիրները ինքնակարգավորման թողնելու ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Վ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**